ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-
06 ապրիլի 2022թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **ՄՈՒՐԱԴ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Հովակիմյան,

Սույն թվականի մարտի 31-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է թիվ ԵԴ/28757/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի Թամարա Բայրամյանի և Հրանտ Բայրամյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ կատարողական վարույթներով հարկադիր կատարողին հայտնած բացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի կարգով գործի ենթակայության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Ձեր՝ 2022 թվականի հունվարի 24-ի որոշումը:

Վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է, որ պատասխանողի կողմից ներկայացվել է սույն գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն՝ այն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ենթակա չլինելու հիմքով, որի քննարկման արդյունքում Ձեր կողմից արձանագրվել է, որ տվյալ քաղաքացիական գործը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, այդուհանդերձ, հաշվի առնելով Ձեր անհամաձայնությունը պատասխանողի կողմից ներկայացված միջնորդությանը, սույն գործի ենթակայությունը որոշելու համար այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը*»:

Վերոգրյալ իրավակարգավորումից ուղղակիորեն հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված է ***դատարանների միջև*** գործի տարածքային ընդդատության կամ ենթակայության վերաբերյալ վեճերի լուծման իրավասություն: Մինչդեռ պատասխանողի կողմից ներկայացված՝ գործի ենթակայության վերաբերյալ միջնորդությանը Ձեր անհամաձայնությունը չի կարող փաստել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վեճի առկայության մասին, ուստի և չի կարող հիմք հանդիսանալ գործի տարածքային ընդդատությունը կամ ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ Ձեր կողմից բարձրացված խնդրո առարկա հարցի քննարկումը դուրս է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորությունների շրջանակից, վերադարձվում է թիվ ԵԴ/28757/02/21 գործը:

Առդիր՝ թիվ ԵԴ/28757/02/21 գործը՝ 1 հատորից (41 թերթ).

Հարգանքով՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**